ArmLur.am

ISSN 1829-2763

25082

9 771829 276006

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

20 հունիսի ուրբաթ 2025
տպագրության ԺԴ տարի

82
(3113)

ք. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

100 դրամ

ԻՆՉ Է ՆՎԻՐԵԼ ՄԱՏՎԻԵՆԿՈՆ ԱԼԵՆ ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանը, համաձայն Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով ներկայացրած «Հանրային պաշտոն զբաղեցնող անձի կամ հանրային ծառայողների նվերների հաշվառման ձեւաթղթի», ստացել է նվեր՝ սուրճի բաժակ՝ իր տակդիրով, 120 հազար ՀՀ դրամ արժողությամբ:

Այս թանկարժեք բաժակը Ալեն Սիմոնյանին նվիրել է Ռուսաստանի Դաշնության Դաշնային ժողովի Դաշնության խորհրդի նախագահ Վալենտինա Մատվիենկոն, ով հունիսի 5-ին պաշտոնական այցով Երեւան էր ժամանել: Նա Հայաստանում էր հունիսի 5-6-ը:

Հարկ է նշել՝ ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանը խոստացել էր, որ օդանավակայանում անձամբ է դիմավորելու Վալենտինա Մատվիենկոյին:

Հիշեցնենք, որ «Հանրային ծառայության մասին» օրենքի 29-րդ հոդվածում, որով սահմանված են հանրային պաշտոն զբաղեցնող անձի եւ հանրային ծառայողի կողմից նվերներ ընդունելու սահմանափակումները, նշվում է, որ հանրային պաշտոն զբաղեցնող անձանց եւ հանրային ծառայողներին թույլատրվում է ընդունել միայն հետեւյալ նվերները.

1. պետական կամ պաշտոնական այցերի կամ միջոցառումների, ինչպես նաեւ աշխատանքային այցերի, գործուղումների շրջանակներում կամ ժամանակ տրվող նվերները կամ սովորաբար կազմակերպվող հյուրասիրությունը,

2. ծառայողական օգտագործման նպատակով անվճար տրամադրվող նյութերը,

3. կրթաթոշակը, դրամաշնորհը կամ նպաստը՝ տրված հրապարակային մրցույթի արդյունքով՝ մյուս դիմորդների նկատմամբ կիրառված նույն պայմաններով եւ նույն չափանիշներով, կամ թափանցիկ այլ գործընթացի արդյունքով,

4. օտարերկրյա պետությունների, միջազգային կազմակերպությունների կամ այլ անձանց կողմից տրվող արարողակարգային նվերները:

Եթե 1-ին կամ 4-րդ կետերով նախատեսված նվերի արժեքը (բացառությամբ սովորաբար կազմակերպվող հյուրասիրությունների) գերազանցում է 60.000 դրամը, ապա այն համարվում է պետական կամ համայնքային սեփականություն: Հանրային պաշտոն զբաղեցնող անձինք եւ հանրային ծառայողները պարտավոր են սահմանված կարգով այն հանձնել պետությանը կամ համայնքին:

Երեկ «Ժողովուրդ» օրաթերթը դիմել էր բարերար Սամվել Կարապետյանի կողմից հովանավորվող «Արարատ-Արմենիա» ֆուբոլային ակումբի գլխավոր տնօրեն Պողոս Գալստյանին՝ պարզելու համար նրա դիրքորոշումը հետեւյալ երկու հարցերի վերաբերյալ՝ ա. խնդրում ենք հաստատել կամ հերքել՝ արդյո՞ք Դուք երեկ ներկա եք եղել դատարանի շենքի բակի հավաքին՝ ի պաշտպանություն Սամվել Կարապետյանի, բ. ի՞նչ դիրքորոշում ունեք Ձեր թիմի հովանավորների ընտանիքի հետ կապված իրադարձությունների վերաբերյալ, քանի որ ArmLur.am-ին հասած տեղեկությունների համաձայն՝ սեփականատերերի կողմից քննարկվում է թիմի գործունեության դադարեցման հարցը՝ պայմանավորված Կարապետյանների բիզնես գործունեության նկատմամբ պետական մարմինների հետապնդումներով: Սակայն վերջինս հայտնեց, որ մեկնաբանելու բան չունի եւ զբաղված է: Նշեց, որ իր հետ կապ հաստատենք կես ժամ անց, եթե նպատակահարմար գտնի, կպատասխանի մեր հարցերին: Մոտ կես ժամ անց մենք նորից փորձեցինք կապ հաստատել Գալստյանի հետ մեկնաբանություն ստանալու համար, սակայն մեր զանգերը մնացին անպատասխան: Մենք նաեւ դրան զուգահեռ՝ պաշտոնական հարցում ենք ուղարկել, որպեսզի ստանանք նրանից մեկնաբանություն:

«Ժողովուրդ» օրաթերթը շարունակում է «Նիկոլ Փաշինյանի իշխանության զոհերը» շարքը: Այս խորագրի ներքո պարբերաբար հրապարակում ենք ակնհայտ քաղաքական ենթատեքստ ունեցող քրեական գործերում ներգրավված պաշտոնյաների անունները: Մարդիկ, ովքեր իրենց պաշտոնը ծառայեցնում են Նիկոլ Փաշինյանի իշխանությանը հաճոյանալու, նրա քաղաքական քմահաճույքները կատարելու համար: Ինչպես հայտնի է, Նիկոլ Փաշինյանի հրահանգով 2 ամսով կալանավորվեց գործարար-բարերար Սամվել Կարապետյանը: Նա մեղադրվում է իշխանությունը զավթելուն՝ ՀՀ սահմանադրությամբ չնախատեսված եղանակով ՀՀ Կառավարության լիազորություններին տիրանալուն ուղղված հրապարակային կոչ հնչեցնելու մեղադրանքով: Իսկ ով է նրա գործով հսկող դատախազը, որը քննիչների հետ կալանքի միջնորդության օրը գնացել էր դատարան: Պարզվում է՝ գործը հսկող դատախազը Արամ Դոլինյանն է, ում 2023 թվականին Գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանը Արմավիրի մարզի դատախազի տեղակալի պաշտոնից ազատել էր ու նշանակել Գլխավոր դատախազության պետական իշխանության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության ավագ դատախազի պաշտոնում: Ավելին՝ Դոլինյանը Արմեն Աշոտյանի գործով դատարանում մեղադրանքը պաշտպանող դատախազն է: Նկատենք, որ Արամ Դոլինյանը գործարար Սամվել Կարապետյանի կալանքի միջնորդության օրը անձամբ դատարան է գնացել: Թեեւ օրենքը չի արգելում, որ կալանքի միջնորդությունների ժամանակ դատախազները դատարան գնան, բայց սովորաբար դատախազներ չեն գնում. միայն բացառիկ դեպքերում: Եվ ահա, Դոլինյանը որոշել էր գնալ դատարան: Կարապետյանի փաստաբանները չէին բացառել, որ դա, գուցե, արվել է դատարանին ճնշելու նպատակով:

«Ժողովուրդ» օրաթերթի՝ իշխանությանը մոտ կանգնած աղբյուրները փոխանցում են, որ Նիկոլ Փաշինյանը հրահանգել է թիմին չիջնել Բաղրամյան պողոտա՝ անհետ կարածների ծնողների մոտ: Ըստ մեր աղբյուրների՝ Փաշինյանն ասել է, որ ինքն արդեն հայտարարել է, թե այդ գործով աշխատանքներ տարվում են, ու անիմաստ է իջնել ու ինչ-որ բան խոսել Բաղրամյան պողոտան շուրջ 3 օր փակած անհետ կորածների ծնողների հետ: Մինչդեռ ոչ մի տեսանելի բան չի արվում: Իշխանական մեր աղբյուրները փոխանցում են, որ հարցը շատ խիստ է դրված ՔՊ-ում, ըստ նրանց՝ Փաշինյանի կարծիքով գործը նորմալ հունով ընթանում է, ու իմաստ չկա խառնվելու պրոցեսին: Ի դեպ, մենք տեղեկացանք, որ ՔՊ-ական պատգամավորները շատ զգուշավոր են ԱԺ մուտք ու ելք անում, քանի որ շատ վախվորած են, մտածում են, որ ծնողները կարող են ցանկացած քայլի դիմել նրանց հետ հանդիպելիս: Իսկ ծնողները չեն էլ թաքցնում, որ վճռական են տրամադրված, հստակ գործողություններ են ակնկալում, քանի որ շուրջ 5 տարի է՝ իշխանությունները նրանց խաբում են:

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

«ԱՆՀԵՏ ԿՈՐԱԾՆԵՐԻ ԾՆՈՂՆԵՐՆ ԻՄ ՏԵՂԸ ԳԻՏԵՆ». ՊԱՏԳԱՄԱՎՈՐ

Գրեթե 3 օր է՝ անհետ կորածների հարազատները փակել են Բաղրամյան պողոտան: ArmLur.am-ը այդ մասին զրուցել է ԱԺ ՔՊ խմբակցության պատգամավոր Անդրանիկ Քոչարյանի հետ:

-Պարո՛ն Քոչարյան, անհետ կորածների ծնողները դրսում են: Դուրս չե՞ք ուզում գնալ՝ նրանց հետ հանդիպելու:

-Անհետ կորածների ծնողները, եթե հարց ունեն ինձ տալու իմ տեղը գիտեն:

-Հիմա նրանք շատ հարցեր ունեն. ասում են՝ 5 տարի մեզ խաբել են: Ի՞նչ կասեք սրա վերաբերյալ:

-Դուք տեսե՞լ եք, թե քանի մեծ հավաք ենք արել այդ թեմայով. դրանց արձանագրությունները կարող եմ տրամադրել:

-Հիմա փողոցում այդ հարցն են քննարկում, պարո՛ն Քոչարյան, ինչո՞ւ դուրս չեք գալիս՝ մոտենաք նրանց:

-Ես շատ լավ գիտեմ՝ ինչ է կատարվում: Ծնողների ու պարոն Աբազյանի հարաբերություններն այնքան ամուր են եղել, որ նա այդ հարցերով զբաղվել է ոչ միայն լրջությամբ, այլեւ ամենայն խորությամբ: Ծնողներն այդ ամենը տեսել են:

-Բայց հիմա ծնողներն անօգնական վիճակում են: Նրանց հույսի թելը կտրվել է:

-Ոչ: Ես հասկանում եմ, որ ուզում են՝ Արմեն Աբազյանի աշխատանքի թելը չկտրվի: Ես իրենց լիովին հասկանում եմ, բայց վարչապետն ասաց, որ այն հանդիպումները, որոնք եղել են, նույնությամբ կշարունակվեն: Հիմա ով կնշանակվի պարոն Աբազյանի փոխարեն՝ նա պարտավոր է այդ հանձնաժողովը շարունակի ղեկավարել նույն տրամաբանությամբ: Բայց ծնողները նույնպես այդ աշխատանքների ընթացքում պետք է վստահություն ձեռք բերեն: Ես տեսել եմ, թե նրանք ինչպես են աշխատում պարոն Աբազյանի հետ: Մեր մոտ տեղի ունեցած լսումներից հետո հսկայական արձանագրություններ են կազմվել, եւ բոլոր գերատեսչությունները ունեն իրենց հանձնարարականներն ու կատարելիքը:

-Պարո՛ն Քոչարյան, ծնողներն անօգնական վիճակում են, չե՞ք գնա նրանց հետ խոսելու: Դուք եք ծնողների հարցով զբաղվել:

-Ես զբաղվել եմ նրանց հուզող հարցերով ու շարունակելու եմ զբաղվել, բայց «անօգնական» բառը մի՛ ասեք, քանի իրենք հավաստիացում չունեն իրենց երեխաների մասին՝ հոգեբանորեն միշտ զգայուն են լինելու այդ հարցի վերաբերյալ: Ես ուզում եմ՝ յուրաքանչյուրս իր պարտավորությունները կատարի: Դրա համար ստեղծված է միջգերատեսչական հանձնաժողով Ազգային անվտանգության տնօրենի գլխավորությամբ: Հիմա մենք մի գործընթացում ենք, որտեղ բանակցային պրոցես է հակառակ կողմի հետ, եւ պարոն Աբազյանը, եթե չեմ սխալվում, երկու հանդիպում ունեցել է:

Զրուցեց ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆԸ

Ո՞Վ Է ՍԿՍԵԼ ՊԱՏԵՐԱԶՄԸ

ՄԱԿ-Ը ՊԵՏՔ Է ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆԻ

ՄԱԿ-ում Իրանի դեսպան եւ մշտական ներկայացուցիչը խստորեն դատապարտել է Իսրայելի շարունակական «ագրեսիվ գործողությունները» Իրանի դեմ՝ նշելով, որ Իրանի պատասխանը եղել է «պաշտպանողական եւ սահմանափակ ծավալով»:

Նյու Յորքում գտնվող ՄԱԿ-ի կենտրոնակայանում կայացած ՄԱԿ-ի նստաշրջանում ելույթ ունենալով՝ Սաիդ Իրավանին պնդել է, որ Իրանը երբեք ռազմական գործողություններ չի սկսել, հաղորդում է Press TV-ն: «Իրանը ագրեսոր չէ», - ընդգծել է նա՝ զգուշացնելով, որ Իսրայելի ռեժիմի գործողությունները, որոնք իրականացվում են ԱՄՆ աջակցությամբ, ՄԱԿ-ի կանոնադրության եւ միջազգային իրավունքի ակնհայտ խախտում են: Անդրադառնալով Իսրայելի ռեժիմի կողմից Իրանի տարածքի նկատմամբ իրականացված անօրինական ագրեսիային՝ Իրավանին այն որակել է որպես «ՄԱԿ-ի կանոնադրության եւ միջազգային իրավունքի հիմնարար սկզբունքների կոպիտ խախտում»: Նա քննադատել է Թել Ավիվի ռեժիմը՝ ՄԱԿ-ի միջուկային գործակալության վերահսկողության ներքո գտնվող քաղաքացիական ենթակառուցվածքները եւ խաղաղ միջուկային օբյեկտները թիրախավորելու համար, եւ զգուշացրել, որ եթե նման հարձակումները շարունակվեն, դրանք կարող են հանգեցնել «աղետալի հետեւանքների»: «Իրանը իրացրել է ՄԱԿ-ի կանոնադրության 51-րդ հոդվածի համաձայն ինքնապաշտպանության իր անբաժանելի իրավունքը», - ասել է նա ՄԱԿ-ի նստաշրջանի ժամանակ: «Մեր պատասխանը համաչափ եւ պաշտպանական բնույթ ուներ՝ թիրախավորելով միայն ագրեսիայի աղբյուրները»: Նա նաեւ կասկածի տակ է դրել «կանխարգելիչ ինքնապաշտպանության» հայեցակարգը, ինչպես մեջբերել են իսրայելական ռեժիմի որոշ պաշտոնյաներ՝ այն անվանելով իրավաբանորեն անհիմն եւ վտանգավոր: «Եթե նման պատմությունը դառնա նորմալ, դա կխաթարի ՄԱԿ-ի կանոնադրության հիմնական սկզբունքներից մեկը՝ ուժի կիրառման արգելքը», - հայտարարել է Իրավանին: Իրավանին դատապարտել է արեւմտյան տերությունների, մասնավորապես՝ Միացյալ Նահանգների, Միացյալ Թագավորության եւ Ֆրանսիայի «երկակի չափանիշները»՝ Իսրայելի ագրեսիան ոչ միայն Իրանում, այլեւ Գազայում, Լիբանանում, Սիրիայում եւ Եմենում կանխելու համար: «Այս տարածաշրջանի իրադարձությունների դառը փորձը ցույց է տալիս ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի բազմիցս ձախողումը իր ամենահիմնական պարտականությունները կատարելու՝ միջազգային խաղաղությունն ու անվտանգությունը պահպանելու հարցում», - նշել է նա: Իրանի դեսպանը զգուշացրել է, որ եթե ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը վճռական գործողություններ չձեռնարկի, Իրանը կշարունակի վճռականորեն պաշտպանել իր ինքնիշխանությունն ու ժողովրդին: «Սա ոչ միայն մեր իրավունքն է, այլեւ մեր պարտականությունը», - ասել է նա:

ԱՆԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ԻՐԱՆԸ ՇԱՐՈՒՆԱԿԵԼՈՒ Է ՀԱՐՎԱԾՆԵՐ ՀԱՍՑՆԵԼ

Իրանի զինված ուժերի շտաբի պետ, գեներալ-մայոր Աբդոլրահիմ Մուսավին հայտարարել է, որ Իրանը շարունակելու է հարվածներ հասցնել Իսրայելին՝ ի պատասխան վերջին շաբաթվա ընթացքում Իրանի դեմ շարունակվող ագրեսիայի:

«Ալլահի օգնությամբ մենք շարունակաբար կհարվածենք սիոնիստական ռեժիմին պատկանող ցանկացած թիրախի եւ մեր առջեւ որեւէ սահմանափակում չենք տեսնում», - հայտարարել է բարձրաստիճան զինվորականը Իսլամական հեղափոխության պահապանների կորպուսի (ԻՀՊԿ) օդատիեզերական ուժերի բազաներից մեկ այցելության ժամանակ:

Մուսավին գովեստի խոսքեր է հղել ԻՀՊԿ-ի օդատիեզերական ուժերին վերջին օրերին Իսրայելական թիրախների դեմ իրականացված ճշգրիտ հարվածների համար:

Հիշեցնենք, որ չորեքշաբթի երեկոյան ԻՀՊԿ-ն հայտարարություն էր տարածել՝ նշելով, որ զինված ուժերը նոր տեսակի հզոր հրթիռներ են արձակել Իսրայելի թիրախների ուղղությամբ: Խոսքը Սեջջիլ տիպի երկփուլանի, երկար հեռահարության եւ գերծանր հրթիռների մասին է:

Հիշեցնենք, որ հունիսի 13-ի գիշերը Իսրայելը հանկարծակի հարձակում էր իրականացրել Իրանի դեմ՝ թիրախավորելով նաեւ Թեհրանի բնակելի շենքերը: Թիրախային հարվածների հետեւանքով սպանվել էին իրանցի բարձրաստիճան զինվորականներ, իսկ բնակելի շենքերի ուղղակի թիրախավորման արդյունքում զոհվել էին քաղաքացիական անձինք:

ՊԵՍԿՈՎԸ ԴԱՏԱՊԱՐՏԵԼ Է

Ռուսաստանի նախագահի մամուլի խոսնակ Դմիտրի Պեսկովը հայտարարել է, որ ԱՄՆ-ի միջամտությունը Իրանի եւ Իսրայելի միջեւ ընթացող հակամարտությանը կհանգեցնի հակամարտության աշխարհագրական ընդլայնման եւ կդառնա վտանգավոր էսկալացիայի նոր փուլ:

«Սա աշխարհագրական ընդլայնում է: Մենք լսում ենք Թեհրանից հնչող հայտարարությունները: Այսինքն՝ սա կլինի էսկալացիայի եւս մեկ վտանգավոր փուլ », - ասել է Պեսկովը՝ պատասխանելով լրագրողների հարցին այն մասին, թե ինչ ռիսկեր կառաջացնի իրանա-իսրայելական հակամարտության մեջ ԱՄՆ-ի միջամտությունը:

ԻՐԱՎԻՃԱԿ

ՀԱԲՎԱԾ ԵՆ ՀԱՍՑՐԵԼ «ՄԻՋՈՒԿԱՅԻՆ ԷՆԵՐԳԻԱՅԻՆ»

Իսրայելի զինված ուժերը հայտնում են, որ իրենց ռազմաօդային ուժերը երեկ գիշեր հարված են հասցրել Իրանի Նաթանզ քաղաքում գտնվող օբյեկտին, որը, նրանց խոսքով, օգտագործվում է միջուկային զենք մշակելու համար: «Այս վայրում պահվում են միջուկային զենքի մշակման համար օգտագործվող եզակի բաղադրիչներ եւ սարքավորումներ, եւ այնտեղ մշակվում են նախագծեր, որոնք հնարավորություն են տալիս արագացնել միջուկային զենքի ծրագիրը», - հայտնել են Իսրայելի պաշտպանության ուժերը (IDF):

Հիշեցնենք, որ սա Նաթանզի ուղղությամբ կատարված առաջին հարվածը չէ: Այս շաբաթվա սկզբին համաշխարհային միջուկային վերահսկողության ղեկավարը BBC-ին հայտնել էր, որ Նաթանզի Իրանի ստորգետնյա ուրանի հարստացման գործարանի ցենտրիֆուգները, հավանաբար, «լուրջ վնասվել են, եթե ոչ ամբողջությամբ ոչնչացվել» անցյալ ուրբաթ Իսրայելի կողմից հասցված հարվածներից հետո՝ Կիրակի օրը, Իրանը կրկնել էր, որ իր միջուկային ծրագիրը խաղաղ նպատակներ ունի եւ կոչ արել Ատոմային էներգիայի միջազգային գործակալության 35 անդամներից բաղկացած խորհրդին խստորեն դատապարտել Իսրայելի հարվածները:

ՎՆԱՍԵԼ ԵՆ ՊԱՏԳԱՄԱՎՈՐԻ ՄԵՔԵՆԱՆ

Երեկ կոտրել են Ազգային ժողովի «Հայաստան» խմբակցության պատգամավոր Գառնիկ Դանիելյանի մեքենայի դիմապակին եւ հայելիները:

«Նախնական զննությամբ ավտոմեքենայից գողություն չի կատարվել: Այս արարքի նպատակների մասին այս պահին միայն կարող եմ ենթադրություններ անել: Տեղի ունեցածի մասին տեղեկացրել եմ իրավապահ մարմիններին: Ակնկալում եմ արագ արձագանք եւ մեղավորների անհապաղ հայտնաբերում»,- գրել է նա:

ԱՐԱՂՉԻՆ ԿՀԱՆԴԻՊԻ ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐԻՆ

Իրանի արտաքին գործերի նախարար Սեյեդ Աբբաս Արաղչին հաստատել է, որ Ժնեւում հանդիպելու է Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի եւ Գերմանիայի իր գործընկերների հետ՝ երեք եվրոպական տերությունների խնդրանքով, հայտնում է Իրանի Mehr լրատվական գործակալությունը:

Արաղչին չի նշել հանդիպման ճշգրիտ ամսաթիվը: Սակայն Արեւմտյան լրատվամիջոցների ավելի վաղ հաղորդած տեղեկությունների համաձայն՝ հանդիպումը տեղի կունենա ուրբաթ օրը՝ Եվրամիության ներկայացուցչի մասնակցությամբ:

Հանդիպման օրակարգը դեռեւս հրապարակված չէ:

ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐԻ ՀԵՏՔԵՐՈՎ

ԻՆՉ ՈՒՆԵՑՎԱԾՔ ՈՒՆԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ ԳՈՐԾԸ ՔՆՆՈՂ ԴԱՏԱՎՈՐԸ

Գործարար, բարերար Սամվել Կարապետյանի գործը քննող դատավորը, ինչպես հայտնել էr ArmLur.am-ը, Երեւան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի դատավոր Արտակ Կարապետյանն է: Վերջինս պատշտոնի նշանակվել է նախորդ տարի՝ նոյեմբերին:



Կարապետյանը իր կարիերան սկսել է ՀՀ ոստիկանության նախկին քննչական գլխավոր վարչության Երեւան քաղաքի քննչական վարչության Շենգավիթի քննչական բաժնից, որտեղ զբաղեցրել է քննիչի եւ ավագ քննիչի պաշտոնները:

ՀՀ նախագահի՝ 2024 թվականի նոյեմբերի 6-ի հրամանագրով նշանակվել է Երեւան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի դատավոր: Երեւան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի դատավոր Արտակ Կարապետյանը 2024 թվականի եկամուտների, անշարժ գույքի, ծախսերի եւ շահերի հայտարարագրում տվյալ տարվա սկզբում հայտարարագրել է 4 անշարժ գույք՝ 2 բնակարան բազմաբնակարան շենքում եւ 2 հողամաս: Գույքերից երեքը գտնվում են Եղեգնաձոր համայնքում, իսկ բնակարաններից մեկը՝ Երեւանում:

Վայոց ձորում գտնվող հողամասերից մեկը Կարապետյանը նախորդ տարի վաճառել է 2 մլն դրամով, սակայն այդ մասին տարեկան եկամուտների բաժնում չի հայտարարագրել:

Արդյունքում՝ տարեվերջին Կարապետյանը ունեցել է երեք անշարժ գույք:

Որպես տվյալ տարվա սկզբում եւ վերջում առկա տրանսպորտի միջոց դատավորը հայտարարագրել է 2013 թվականի արտադրության BMW մակնիշի մեքենա, որը ձեռք է բերել 2019 թվականին, երբ աշխատել է ՀՀ դատախազությունում:

Արտակ Կարապետյանի բանկային հաշիվների մնացորդները կազմել են գրեթե 600 հազար դրամ, կանխիկ դրամական միջոցները՝ 3 մլն դրամ:

Դատավորի՝ հաշվետու տարվա եկամուտները կազմել են 17 մլն 299 հազար դրամ, որից 13 մլն 959 հազարն աշխատանքի վարձատրություն է ՀՀ Բարձրագույն դատական խորհրդի աշխատակազմ Դատական դեպարտամենտից, իսկ 3 մլն 339 հազար դրամը ՀՀ ՊԵԿ-ից ստացած եկամուտ է, որը հիպոտեկի մայր գումարի մնացորդը մարելու համար է:

Ստացված վարկերի եւ փոխառությունների մայր գումարի մնացորդը հաշվետու տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 38 մլն 300 հազար դրամ, որից 35 մլն 300 հազար դրամը անշարժ գույքի հիփոթեքի մայր գումարի մնացորդն է:

Հիշեցնենք, որ հունիսի 18-ին՝ կեսգիշերին մոտ, հայտնի դարձավ, որ դատարանը Սամվել Կարապետյանին երկու ամսով կալանավորեց:

Հիշեցնենք, որ Քննչական կոմիտեն հայտնել էր, որ Կարապետյանը մեղադրվում էր «ՀՀ քննչական կոմիտեի պետության, սահմանադրական կարգի հիմունքների եւ հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների քննության գլխավոր վարչություն ստացված հաղորդման հիման վրա ՀՀ քրեական օրենսգրքի 422-րդ հոդվածի 2-րդ մասով նախաձեռնվել է քրեական վարույթ այն կապակցությամբ, որ Ս.Կ.-ն զանգվածային լրատվության միջոցով հարցազրույց տալու ընթացքում հնչեցրել է իշխանությունը զավթելուն՝ ՀՀ սահմանադրությամբ չնախատեսված եղանակով ՀՀ կառավարության լիազորություններին տիրանալուն ուղղված հրապարակային կոչ: 2025 թվականի հունիսի 18-ին միջնորդություն է ներկայացվել քրեական վարույթի օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնող դատախազին՝ հանրային քրեական հետապնդում հարուցելու մասին, որի կապակցությամբ վերջինիս կողմից նույն օրը որոշում է կայացվել Ս.Կ.-ի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 422-րդ հոդվածի 2-րդ մասով հանրային քրեական հետապնդում հարուցելու մասին: 2025 թվականի հունիսի 18-ին Ս.Կ.-ն ձերբակալվել եւ ներկայացվել է վարույթն իրականացնող մարմին: Միջնորդություն է ներկայացվել դատարան՝ վերջինիս նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց կիրառելու վերաբերյալ»:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՔՆՆԱԴԱՏԵԼ ԵՆ ԻՍՐԱՅԵԼԻՆ

Ռուսաստանի Դաշնության նախագահ Վլադիմիր Պուտինը եւ ՉԺՀ նախագահ Սի Ծինփինը հեռախոսազրույց են ունեցել:

Ռուսաստանի եւ Չինաստանի նախագահները հեռախոսազրույցի ընթացքում քննադատել են Իսրայելի գործողությունները Իրանի դեմ՝ շեշտելով լարվածության թուլացման անհրաժեշտությունը: ՌԴ նախագահի օգնական Յուրի Ուշակովի փոխանցմամբ՝ երկու առաջնորդները նշել են, որ Իսրայելի գործողությունները խախտում են միջազգային իրավունքը:

Նախագահները համակարծիք են եղել, որ Իրանի միջուկային ծրագրի շուրջ մտահոգությունները չեն կարող լուծվել ռազմական ճանապարհով: Նրանք կոչ են արել խնդիրը լուծել դիվանագիտական ջանքերով: Սի Ծինփինը հատկապես ընդգծել է Ռուսաստանի դերը որպես հնարավոր միջնորդ՝ նշելով, որ ՌԴ-ն կարող է նպաստել լարվածության թուլացմանը:

Հեռախոսազրույցը տեղի է ունեցել հինգշաբթի օրը՝ Մերձավոր Արեւելքում լարվածության աճի պայմաններում:

ՄԱՍՈՒՆՔԸ ՏԱՐՎԵԼ Է ՇՈՂԱԿԱԹԻ ՎԱՆՔ

Հունիսի 19-ին Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին նշեց Սուրբ Հովհաննես Կարապետի եւ Սուրբ Աթանագինե եպիսկոպոսի տոնը, որը նաեւ Վաղարշապատի Սուրբ Շողակաթ վանքի ուխտի օրն է:

Սուրբ Հովհաննես Մկրտչի եւ Աթանագինե եպիսկոպոսի մասունքներն ամփոփող խաչ-մասունքարանն առավոտյան Մայր Աթոռից Սուրբ Շողակաթ վանք տարվեց եկեղեցականների հանդիսավոր թափորով:

Թափորը մինչեւ Սուրբ Գրիգոր Լուսավորչի կամար գլխավորեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը՝ մասունքարանով օրհնելով բարեպաշտ ժողովրդին: Այնուհետեւ սրբազան մասունքները Նորին Սրբությունը փոխանցեց Մայր Աթոռի Սուրբ Էջմիածնի լուսարարապետ Հոգեշնորհ Տ. Անանիա վարդապետ Ծատուրյանին:

Սուրբ Շողակաթ վանքի առջեւ թափորը դիմավորեցին բազմաթիվ ուխտավորներ՝ Մայր Աթոռի Վանորեից տեսուչ Գերաշնորհ Տ. Արտակ եպիսկոպոս Տիգրանյանի գլխավորությամբ:

Տոնի կապակցությամբ վանքում մատուցվեց Սուրբ եւ Անմահ Պատարագ: Պատարագիչն էր Սուրբ Շողակաթ վանքի վանահայր Հոգեշնորհ Տ. Արիս աբեղա Տոնոյանը: Սուրբ Պատարագի ավարտին Սուրբ Շողակաթ վանքի բակում Արտակ եպիսկոպոսի նախագահությամբ Սուրբ Հովհաննես Մկրտչի եւ Աթանագինե եպիսկոպոսի մասունքներն ամփոփող խաչ-մասունքարանով կատարվեց հավատացյալների օրհնություն եւ Անդաստանի կարգ:

ԻՐԱՎԱԿԱՆ

«ՎԱՐԴԱՆՅԱՆԻՆ ԲԱՎՔՈՒՄ ԵՆ ԴԱՏՈՒՄ, ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻՆ՝ ԱՅՍՏԵՂ»

ԺՈՂՈՎՈՒՐԴԸ ՉԻ ԸՆԴՈՒՆՈՒՄ ԿԱԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ

Հունիսի 17-ին բարեգործ Սամվել Կարապետյանը հարցազրույցի ժամանակ նշեց, որ ամբողջովին սասարում է Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցուն: Հարցազրույցից հետո Նիկոլ Փաշինյանը ֆեյսբուքյան իր էջում գրառում կատարեց՝ նշելով, որ պետք է դասիվացնել նրանց, ընդ որում՝ ընդմիշտ: Այս հայտարարությունից միշտ անց հայտնի դարձավ, որ հատուկ ջոկատայինները փորձել են խուզարկել բարերարի տունը եւ նրան բերման ենթարկել, ինչը թույլ չեն տվել Կարապետյանի անվտանգության աշխատակիցները:

Արդեն ուշ գիշերին Կարապետյանը դուրս է եկել իր առանձնատնից, զրուցել լրագրողների հետ, նշել, որ ինքն անսասան է իր սկզբունքներում եւ «թքած ունի» նրանց (իշխանության) ու էլեկտրական ցանցերի վրա:

Գործող իշխանության կողմից այս հետապնդումը Կարապետյանի նկատմամբ ժողովրդի շրջանում առաջացրել է դժգոհություն, եւ մեր հանրությունը թե՛ տվյալ օրը, թե՛ երեկ ամբողջ օրը կանգնած է եղել Սամվել Կարապետյանի կողքին: Բարերարի նկատմամբ այս վերաբերմունքը դժգոհություն է առաջացրել նաեւ արցախցիների շրջանում:

ArmLur.am լրատվականի հետ հարցազրույցի ժամանակ արցախցի հասարակական-քաղաքական գործիչ Անաստաս Իսրայելյանը ասաց հետեւյալը. «Սամվել Կարապետյանն այն անձնավորությունն է, որ միշտ բարձր է պահել հայ մարդու էությունը: Անուրանալի են նրա ներդրումներն Արցախում: Անուրանալի են նրա նվիրվածությունն Արցախին, Արցախը հայկական պահելու ազնիվ մղումները: Նա ամբողջովին լծված է եղել Արցախը հայկական պահելու գործին, Հայաստանը շենացնելու, մեր ժողովրդի անունը Հայաստանից դուրս բարձր պահելու համար: Մենք հիմա ծանր իրավիճակում ենք գտնվում: Կհիշեք, թե ինչպիսի ծանր պայմաններում Արցախում ապրելու կամք արտահայտեց մեծանուն բարերար Ռուբեն Վարդանյանը, որ Բաքվում է հայտնվել իր հայ տեսակին ջուրանալու համար: Նույն էլ հիմա է: Տարբերությունը մեկն է՝ որտե՞ղ են դատում: Ռուբեն Վարդանյանին Բաքվի բանտում են դատում, այստեղ, իր մայր հողում Սամվել Կարապետյանին են փորձում դատել, ճնշել, չեզոքացնել,- ասում է Անաստաս Իսրայելյանը եւ դիմում հանրությանը,- Ժողովո՛ւրդ, հիմա հասկանո՞ւմ եք՝ ինչ է կատարվում. կան մարդիկ, որոնց համար մարդկային արժանիքներ, հայ ապրելու իրավունքը, պատվով ապրելու իրավունքը, հայի անունը, ազգային, հոգեւոր, մշակութային արժեքներն ավելի բարձր են, քան նյութականը եւ անցողիկ այլ երեւույթներ»:

Միայն Արցախում կատարած ներդրումների մասին խոսելու համար բավական է հիշել Ստեփանակերտի Հանրապետական հիվանդանոցը. «Ոչ մի արցախցի չի մոռացել Սամվել Կարապետյանի նվիրվածությունն Արցախին ու արցախցիներին: Բոլորդ էլ կհիշեք, թե ինչպիսի բարձրակարգ հիվանդանոց էր կառուցվել Ստեփանակերտում, ինչպիսի նորարարական տեխնոլոգիաներով ու սարքերով: Պատերազմի ժամանակ մեր վիրավորներն այնտեղ բուժվեցին, ինչքան դեղորայք ուղարկվեց ու էլի Սամվել Կարապետյանի օգնությամբ: Բա դա մոռանա՞լ կլինի»:

Իսրայելյանը բարձր է գնահատում Սամվել Կարապետյանի քաղաքական կեցվածքը, քանի որ այս օրերին շատերը հրաժարվել են իրենց գնահատականը տալ ՀԱԵ-ի դեմ իրականացվող քարոզարշավին:

«Սամվել Կարապետյանը, շատ լավ գիտակցելով՝ ինչ քաղաքական խմբակ է Հայաստանում այսօր, իշխանությանն ընդդիմացավ եւ պաշտպանեց իր սկզբունքը՝ իր աջակցությունը հայտնելով ՀԱԵ-ին: Ցավալին այն է, որ հայ անվանի մեծահարուստներ շատ կան, ինչպես Հայաստանում այնպես էլ Հայաստանից դուրս, սակայն լուռ են: Ո՞ւր եք: Ինչո՞ւ ձայն չեք հանում: Ինչո՞ւ Սամվել Կարապետյանի նման չեք գերադասում վեհ արժանիքները»,- եզրափակեց Իսրայելյանը:

ՆԱՆԻԿ ԱՂԱՍՅԱՆ

ԻՐԱՎԻՃԱԿ

ՋԵՅՆԱԼՅԱՆՆ ԸՆՏՐՎԵՑ ՍԴ ԴԱՏԱՎՈՐ

Արտակ Զեյնալյանը երեկ ընտրվեց ՍԴ դատավոր: Նրա օգտին կողմ է քվեարկել 67 պատգամավոր: Նշենք, որ ընդդիմությունը քվեարկությանը չի մասնակցել:

Հիշեցնենք՝ երեկ՝ առավոտյան, Երեւանի ավագանու «Հանրապետություն» խմբակցությունից հայտնել էին, որ խմբակցության անդամ Արտակ Զեյնալյանը վայր է դրել ավագանու մանդատը:

ՆԱԽԿԻՆ ԹԱՂԱՊԵՏԸ ԿԱԼԱՆԱՎՈՐՎԵԼ Է

Ինչպես ավելի վաղ ArmLur.am-ը տեղեկացավ, հունիսի 10-ին Ռազմիկ Մկրտչյանը հայտարարել էր իր լիազորությունները դադարեցնելու մասին՝ պատճառաբանելով, որ արդեն տեւական ժամանակ է, ինչ պաշտոնավարում է եւ պատճառներն անձնական են, իսկ մինչ այդ՝ մայիսի 20 -ին, հայտնի էին դարձել թաղապետարանի աշխատակիցների ձերբակալությունների մասին:

Նկատենք, որ սա առաջին դեպքը չէ, երբ Փաշինյանի իշխանության ներկայացուցիչը, ձերբակալվելուց առաջ, ազատվում է. տպավորություն է, որ նրանց նախապես զգուշացնում են հնարավոր հետապնդման մասին՝ պահանջելով գրել հրաժարական, ինչի դեպքում արդեն պաշտոնատպես հաղորդվում է ոչ թե գործող պաշտոնյայի, այլ արդեն նախկին պաշտոնյայի նկատմամբ հետապնդման մասին: Իսկ առավել մտահոգիչն այն է, որ նախաքննական մարմինների քայլերի մասին նախապես տեղեկանում են ինչ-ինչ շրջանակներ:

ՔՐԵԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ

ՈՐՏԵՂ ԿԿՐԻ ԿԱԼԱՆՔԸ

Armlur.am-ին հայտնի դարձավ, որ Սամվել Կարապետյանին Ավանի դատարանից գիշերը տեղափոխել են Արմավիրի քրեակատարողական հիմնարկ: Կարապետյանը, պետք է այնտեղ կրի իր 2-ամսյա կալանքը:

Հիշեցնենք, որ ՀՀ քննչական կոմիտեի պետության, սահմանադրական կարգի հիմունքների եւ հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների քննության գլխավոր վարչություն ստացված հաղորդման հիման վրա ՀՀ քրեական օրենսգրքի 422-րդ հոդվածի 2-րդ մասով նախաձեռնվել է քրեական վարույթ այն կապակցությամբ, որ Ս.Կ.-ն զանգվածային լրատվության միջոցով հարցազրույց տալու ընթացքում հնչեցրել է իշխանությունը զավթելուն՝ ՀՀ սահմանադրությամբ չնախատեսված եղանակով ՀՀ կառավարության լիազորություններին տիրանալուն ուղղված հրապարակային կոչ:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՌՈՒՍԱՍՏԱՆԻՑ ԿՕԳՆԵ՞Ն

Մենք ասել ենք, որ Ռուսաստանի քաղաքացին, ռուս ձեռնարկատերը, ինչպես ցանկացած այլ ՌԴ քաղաքացի եւ ռուս ձեռնարկատեր եթե կապվում է մեր դեսպանատան, ռուսական կողմի հետ միշտ օգնություն եւ աջակցություն է ստանում: Այս մասին ճեպազրույցի ժամանակ հայտարարեց Ռուսաստանի արտաքին գործերի նախարարության պաշտոնական ներկայացուցիչ Մարիա Զախարովան՝ մեկնաբանելով Հայաստանում Սամվել Կարապետյանի ձերբակալությունը:

«Այս թեման քննարկել շարունակելու համար մենք պետք է հասկանանք, թե ինչ է կատարվում այնտեղ՝ հստակ հայտարարությունների եւ մեղադրանքների տեսքով: Այնքան շատ հայտարարություններ են արվել, այնքան յուրահատուկ, որ նախ եկեք հասկանանք, թե ինչ է քննարկվում: Եվս մեկ անգամ. որպես Ռուսաստանի քաղաքացի եւ ռուս գործարար, բնականաբար, նրան կտրամադրվի անհրաժեշտ աջակցություն», - ընդգծեց Զախարովան:

ՈՒՂԵՎՈՐԸ ԹՄՐԱՆՅՈՒԹ Է ՊԱՀԵԼ

Համայնքային ոստիկանության Նուբարաշենի բաժնի ծառայողները, իրացնելով ստացված օպերատիվ տեղեկությունները, հունիսի 16-ին ապօրինի թմրամիջոց պահելու եւ օգտագործելու կասկածանքով Նուբարաշենի խճուղում հայտնաբերել, ձերբակալել եւ «Նիսան» մակնիշի մեքենայով հանդերձ բաժին են ներկայացրել Երեւանի բնակիչ 29-ամյա մի երիտասարդի, ինչպես նաեւ մեքենայի 21 եւ 26-ամյա ուղեւորներին: 26-ամյա ուղեւորը ձերբակալման ժամանակ նետել է փաթեթ:

Նախաձեռնվել է քրեական վարույթ, որի շրջանակում դեպքի վայրի զննությամբ հայտնաբերվել է շուրջ 1 գրամ շոկո թմրամիջոցի նմանվող դարչնագույն մանրացված զանգված:

Կազմված փաստաթղթերը փոխանցվել են նախաքննական մարմին:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ հունիսի 18-ից 19-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումների կողմից բացահայտվել է հանցագործության 121 դեպք, որից 1-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ԴԱՏԱՊԱՐՏՎԵԼ Է ԱԶԱՏԱԶՐԿՄԱՆ

Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանի Իջեւան քաղաքի նստավայրում դատավոր Սամվել Մարդանյանի նախագահությամբ ընթանում էր Բերդ համայնքի Իծաքար գյուղի բնակիչ, 1992 թվականին ծնված Գեղամ Արթուրի Գինովյանի դատավարությունը: Նրան մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, հանդիսանալով ՀՀ ՊՆ թիվ Ն զորամասի պայմանագրային զինծառայող, դասակի հրամանատար, ի պաշտոնե հնարավորություն ունենալով առնչվելու պետական եւ ծառայողական գաղտնիք կազմող տեղեկությունների եւ փաստաթղթերի, ինչպես նաեւ ռազմական բնույթի այլ տեղեկությունների, լրտեսության, օտարերկրյա պետության ներկայացուցիչներին ռազմական բնագավառում պետական, ծառայողական գաղտնիք հանդիսացող եւ ռազմական բնույթի այլ տեղեկություններ հանձնելու, թշնամական գործունեություն իրականացնելու համար օտարերկրյա հատուկ ծառայությունների ներկայացուցչին այլ օգնություն ցույց տալու եղանակներով կատարել է պետական դավաճանություն՝ ի վնաս Հայաստանի Հանրապետության տարածքային անձեռնմխելիության եւ արտաքին անվտանգության: Գ. Գինովյանին մեղադրանք է առաջադրել ՀՀ քրեական օրենսգրքի 418-րդ հոդվածի 1-ին մասով: Սույն հոդվածը որպես պատիժ նախատեսում է 15-20 տարի ժամկետով ազատազրկում, կամ ցմահ ազատազրկում: Գ. Գինովյանի նկատմամբ խափանման միջոց է ընտրվել կալանավորումը: Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանը Գ. Գինովյանին դատապարտել է 17 տարվա ազատազարկման՝ պատժի կրման սկիզբը համարելով 2022թ. հոկտեմբերի 13-ը: Գ. Գինովյանի պաշտպանը բողոքարկել է այդ դատավճիռը, որը օրինական ուժի մեջ չի մտել: Իծաքար գյուղից տեղեկացանք, որ Գեղամ Գինովյանը գյուղում բնակվում էր ծնողների ու կնոջ հետ. նա երեխաներ չունի: Նրա երեւանցի կինը տեղափոխվել է մայրաքաղաք:

ՏԱՎՈՒՇԻՑ ՀԵՌԱՑԵԼ ԵՆ

Տավուշի մարզպետարանի տվյալներով՝ 2023 թվականի աշնանը Արցախից բռնագաղթածներից Տավուշի մարզում բնակություն է հաստատել 2970 անձ (780 ընտանիք): Տավուշի մարզպետարանից տեղեկացել ենք. «Տավուշի մարզում ս/թ հունիսի 9-ի դրությամբ կա ԼՂ-ից բռնի տեղահանված 551 ընտանիք եւ 1918 անձ, իսկ 10 ընտանիք բնակարանային ապահովման ծրագրով ձեռք է բերել բնակարան՝ Իջեւան եւ Նոյեմբերյան համայնքներում»:

ՓՆՏՐՎՈՒՄ ԵՆ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐ ՈՒ ՏՆՕՐԵՆՆԵՐ

Տավուշի մարզպետարանից տեղեկացել ենք, որ Տավուշի մարզի հանրակրթական դպրոցներում առկա է ուսուցչի 76 թափուր հաստիք, (բոլոր առարկաները դասավանդվում են այլ մասնագետների կողմից), իսկ 14 դպրոցում առկա է տնօրենի թափուր հաստիք:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ԿԻԲԵՌՀԱՐՁԱԿՈՒՄ

ԻՆՉ ՎԻՃԱԿՈՒՄ Է ԻՐԱՆԻ ԱՄԵՆԱՄԵԾ ԿՐԻՊՏՈԲՈՐՍԱՆ

Իրանի ամենամեծ կրիպտոարժույթների բորսան՝ Nobitex -ը, հաստատել է ընկերության նկատմանբ կիբեռհարձակումների մասին լուրերը, որի արդյունքում գողացվել են տասնյակ միլիոնավոր դոլարներ, լուրեր են շրջանառվում 48 միլիոն դոլարի կորստի մասին:

Nobitex-ի ենթակառուցվածքները թիրախավորած հարձակման պատասխանատվությունը ստանձնել է Predatory Sparrow (Gonjeshke Darande) հաքերային խումբը, որը ենթադրաբար կապված է Իսրայելի հետ:

Խումբը մեղադրել է Nobitex-ին պատժամիջոցներից խուսափելուն նպաստելու եւ Իրանի կառավարության հետ կապված գործողությունները ֆինանսավորելու համար, այդ թվում՝ Իսլամական հեղափոխության պահապանների կորպուսին (IRGC) աջակցելը: Nobitex-ը չորեքշաբթի օրվա հայտարարության մեջ նշել է, որ իր տեխնիկական թիմը նույն օրվա առավոտյան հայտնաբերել է չարտոնված մուտք եւ արագ գործել է՝բոլոր մուտքերը կասեցնելու համար: Ընկերությունը ընդգծել է, որ օգտատերերի ակտիվների մեծ մասը պահվում են պահեստներում եւ մնացել են անվտանգ:

Ընկերության «Տաք դրամապանակ» հավելվածը միացված է ինտերնետին եւ օգտագործվում է արագ գործարքների համար, մինչդեռ սառը դրամապանակը անցանց է եւ առաջարկում է ավելի բարձր անվտանգություն:

«Միջադեպը ազդել է միայն «Տաք դրամապանակներում» պահվող ակտիվների մի մասի վրա», - հայտնել է ընկերությունը: «Nobitex-ը հայտարարել է, որ կստանձնի ամբողջ պատասխանատվությունը եւ կփոխհատուցի բոլոր վնասները իր ապահովագրական հիմնադրամի եւ ներքին ռեսուրսների միջոցով»: Բորսայի կայքը եւ հավելվածը ժամանակավորապես անջատվել են, քանի դեռ շարունակվում է ներքին հետաքննությունը:

Իր հերթին Predatory Sparrow-ն սպառնացել է հրապարակել Nobitex-ի ներքին կոդը եւ օգտատերերի տվյալները : Հիշեցնենք, որ երեքշաբթի օրը խումբը նաեւ ստանձնել էր Իրանի զինված ուժերի հետ կապված «Սեփահ» բանկի վրա կատարված առանձին կիբեռհարձակման պատասխանատվությունը՝ պնդելով, որ նրանք ոչնչացրել են կարեւոր տվյալներ եւ խաթարել առցանց հասանելիությունը:

Իրանի կրիպտո շուկայում գերիշխող Nobitex-ը հաճախ դիտվում է որպես համաշխարհային ֆինանսական ցանցերին մուտք գործելու հիմնական ուղի՝ ԱՄՆ-ի գլխավորած խիստ պատժամիջոցների պայմաններում:

ԱՆԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ

ՏԱՐԲԵՐ ԵՐԿՐՆԵՐ ՏԱՐՀԱՆՈՒՄ ԵՆ ԿԱՋՄԱԿԵՐՊՈՒՄ

Բուլղարիան փակել է Թեհրանում իր դեսպանատունը եւ տարհանել դիվանագիտական անձնակազմին եւ նրանց ընտանիքի անդամներին Ադրբեջանի տարածքով:

Բուլղարիայի դեսպանատունը կշարունակի գործել Բաքվից, հայտնել է երկրի վարչապետ Ռոսեն Ժելյազկովը:

Իրանում Հունգարիայի դեսպանատունը եւս ժամանակավորապես տեղափոխվել է Բաքու: Արտգործնախարար Պետեր Սիյարտոն հայտարարել է, որ դեսպանատան աշխատակիցները եւ նրանց ընտանիքների անդամները հեռացել են Իրանից:

Իսկ Չինաստանն Իրանից տարհանել է ավելի քան 1600 քաղաքացու, եւս հարյուրավոր քաղաքացիների՝ Իսրայելից: Ըստ Չինաստանի արտաքին գործերի նախարարության խոսնակի՝ երկիրը կապի մեջ է Իրանի, Իսրայելի, Եգիպտոսի եւ Օմանի հետ: Չինաստանը հակամարտության կողմերին, մասնավորապես՝Իսրայելին, անհապաղ հրադադարի կոչ է անում՝ նշել է խոսնակը: Իրանում Չինաստանի դեսպանատունն իր քաղաքացիներին կոչ է արել երկիրը լքել ցամաքային ճանապարհներով, նաեւ նախազգուշացրել է դեպի Ադրբեջանի եւ Թուրքմենստանի հետ անցակետերում մեծ կուտակումների մասին: Չինաստանի դեսպանատունը քաղաքացիներին խորհուրդ է տվել Իրանից հեռանալ նաեւ Հայաստանով, Թուրքիայով եւ Իրաքով:

Իսրայելի եւ Իրանի միջեւ փոխադարձ հարվածների պատճառով վերջին օրերին տարբեր երկրներ են իրենց քաղաքացիների տարհանումներ սկսել, այդ թվում՝ Հնդկաստանը, Գերմանիան, Չեխիան, Սլովակիան, Հունաստանը, Միացյալ նահանգները, Ավստրալիան, Հնդկաստանը, Պակիստանը, Ճապոնիան:

ԲԱՆԱԿՑՈՒՄ ԵՆ ԲԱՔՎՈՒՄ

Ադրբեջանի եւ Բելառուսի ռազմաօդային ուժերի հրամանատարները բանակցություններ են վարել Բաքվում: Նամիկ Իսլամզադեն եւ Անդրեյ Լուկյանովիչը քննարկել են բելառուսա-ադրբեջանական ռազմական համագործակցության հիմնական ուղղությունները եւ դրա զարգացման ծրագրերը: Այս մասին հայտնում է «Սպուտնիկ» գործակալության ադրբեջանական ծառայությունը:

Հիշեցնենք, որ նախօրեին Մինսկում տեղի է ունեցել Ադրբեջանի եւ Բելառուսի պաշտպանության նախարարությունների ղեկավարների հանդիպումը:

Զաքիր Հասանովը եւ Վիկտոր Խրենինը քննարկել են տարածաշրջանային անվտանգության հարցեր, ռազմական համագործակցության զարգացման հեռանկարներ եւ այլն:

Այցի ընթացքում Հասանովը այցելել է նաեւ Բելառուսի զինված ուժերի ռազմական ակադեմիայի գլխավոր շտաբի ֆակուլտետ:

ՊՈՒՏԻՆԸ ՊԱՏՐԱՍՏ Է ՀԱՆԴԻՊՄԱՆ

Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինը հայտարարել է, որ պատրաստ է հանդիպել Ուկրաինայի նախագահ Վլադիմիր Զելենսկիի հետ, սակայն կասկածի տակ է դնում նրա իրավական լեգիտիմությունը:

«Ես պատրաստ եմ հանդիպել բոլորի հետ, այդ թվում՝Զելենսկու: Հարցն այն է, թե ով կստորագրի փաստաթղթերը (խաղաղության համաձայնագիրը - Խմբ.)», - ասել է Պուտինը Սանկտ Պետերբուրգի միջազգային տնտեսական ֆորումի շրջանակում միջազգային լրատվական գործակալությունների ղեկավարների հետ հանդիպման ժամանակ:

«Ուկրաինայի նախագահն ընտրվում է հինգ տարով, նույնիսկ ռազմական դրության ժամանակ ժամկետը երկարաձգելու միջոցներ չկան: Ռազմական դրության ժամանակ միայն խորհրդարանի աշխատանքն է երկարաձգվում: Այս դեպքում նախագահի իրավունքների մասին ոչ մի տեղ ոչինչ գրված չէ», - ասել է Ռուսաստանի Դաշնության նախագահը:

● *Անցած 1 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 11 պատահար, 1 մարդ մահացել է, 13-ը՝ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ԴՊՐՈՑՆԵՐ

ՄԵԿՆԱՐԿՈՒՄ Է ՀԱՅՏԱԳՐՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՓՈՒԼԸ

2025 թվականի հունիսի 24-ին՝ առավոտյան ժամը 9:00-ից, մեկնարկում է ՀՀ պետական դպրոցներ առաջին դասարանցիների հայտագրման հիմնական փուլը՝ hayt.emis.am կայքի միջոցով: Այս մասին հաղորդագրություն է տարածել ՀՀ ԿԳՄՍ նախարարությունը:

«Խնդրում ենք լինել ուշադիր, քանի որ haytru.emis.am կայքը, որը նախատեսված է ռուսերենով ուսուցման դասարաններում հայտագրման համար, այս փուլում չի գործելու:

Այս փուլում հայտագրվող երեխաների միջին թիվը 15000 է, սակայն նախորդ տարիների փորձը ցույց է տալիս, որ համակարգի գործարկման առաջին վայրկյաններին միաժամանակյա հարցումների թիվը գերազանցում է 45000-ը, ինչը նշանակում է, որ միեւնույն երեխային տարբեր սարքերից փորձում են հայտագրել: Դրա արդյունքում համակարգն ունենում է մեծ ծանրաբեռնվածություն, եւ դժվարանում է երեխային նախընտրած հաստատությունում հայտագրելու գործընթացը:

Հարգելի՛ ծնողներ, եւս մեկ անգամ հորդորում ենք՝ մեկ երեխային հայտագրելու համար օգտագործել մեկ սարք: Խնդրում ենք հայտագրման ժամանակ նման ծանրաբեռնվածության դեպքում պահպանել հանգստություն եւ եւս մեկ անգամ հանգիստ, առանց ժամանակ կորցնելու փորձել իրականացնել հայտագրումը:

Հայտագրման համար նախընտրելի է օգտվել google chrome browser-ից: Այլ browser-ներ կարող են հայտագրման կայքը բեռնել ձեր սարքի հիշողությունից, որի պատճառով լրացված հայտը կարող է չուղարկվել՝ պարզապես պահվելով սարքի հիշողության մեջ, ինչի արդյունքում հայտագրումը տեղի չի ունենա:

Հայտագրման գործընթացը տեւում է միջինում 30 վայրկյան: Հաշվի առնելով, որ համակարգում կան մեծ պահանջարկ ունեցող դպրոցներ, որոնցում հայտագրելու ցանկություն ունեցող երեխաների թիվն ավելի մեծ է, քան տվյալ դպրոցի համար լիցենզիայով սահմանված տեղերի քանակը, ապա նշված դպրոցներում հաշված րոպեների ընթացքում լրանում են լիցենզիայով նախատեսված տեղերը, եւ նոր հայտագրում այլեւս հնարավոր չի լինում իրականացնել:

Սիրելի՛ ծնողներ, եւս մեկ անգամ խնդրում ենք ձեր եւ երեխաների տվյալների համապատասխանության ստուգումն իրականացնել նախօրոք՝ մինչեւ հունիսի 24-ը, քանի որ առանց տվյալների համապատասխանության ստուգման՝ չեք կարողանալու հայտագրել երեխային: Տվյալների ստուգումը հավելյալ ժամանակ է պահանջում, եւ հայտագրման օրը ստուգում իրականացնելու դեպքում շատ հավանական է, որ չհասցնեք երեխային հայտագրել ձեր նախընտրած դպրոցում: Տվյալների համապատասխանության ստուգումն իրականացվում է stugum.emis.am կայքի միջոցով:

Հայտագրման համակարգը կգործի մինչեւ 2025-26 ուսումնական տարվա ավարտը», - ասված է հաղորդագրության մեջ:

«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» 4

ԲԱՆԿԸ՝ ԳԼԽԱՎՈՐ ՀՈՎԱՆԱՎՈՐ

Հունիսի 18-ին Երեւանում տեղի ունեցավ Հյուրընկալության ներդրումային միջազգային ֆորում 2025-ը:

Միջոցառումը համախմբեց հյուրընկալության ոլորտի, միջազգային ներդրումային ֆոնդերի եւ կառույցների ներկայացուցիչներին՝ միավորելու ջանքերը եւ նպաստելու Հայաստանի դիրքավորմանը համաշխարհային զբոսաշրջային քարտեզին:

Ֆորումի բանախոսների թվում էին ՀՀ էկոնոմիկայի նախարար Գեւորգ Պապոյանը, ՄԱԿ-ի մշտական համակարգող Ֆրանսուազ Ժակոբը, Տնտեսական համագործակցության եւ զարգացման կազմակերպության (OECD) զբոսաշրջության Կոմիտեի նախագահ Սերժիո Գերեյրոն եւ այլ բարձրաստիճան հյուրեր:

Stone Development ընկերության հիմնադիր տնօրեն Ակիմ Պողոսյանը հույս հայտնեց, որ Ֆորումը առաջիկայում ավելի մեծ հաջողություններ կգրանցի. «Մեզ համար շատ կարեւոր է նման միջոցառումների անցկացումը, քանի որ այն իսկապես դարձավ հետաքրքիր հարթակ ներդրողների, գործընկերների համար:

Հույս ունենք, որ Ֆորումը կարեւոր հարթակ կդառնա նաեւ Հանրապետության համար:

Մենք անցած Ֆորումում ունեցանք շատ լավ արդյունք, այդ թվում Հայաստանում կնքեցինք մեծ եւ հետաքրքիր պայմանագրեր:

Հյուսյս ունենք, որ ամեն տարի ավելի շատ նախագծեր կներկայացվեն այս Ֆորումում»,- ասաց Պողոսյանը:

Ֆորումի գլխավոր ֆինանսական գործընկերներից էր «Ամերիաբանկը», որը հանդիսանում է Հայաստանի խոշորագույն վարկային պորտֆել ունեցող եւ ֆինանսական ու տեխնոլոգիական ծառայությունների ոլորտում առաջատար դիրք զբաղեցնող հաստատությունը:

«Բանկը հանդիսանում է Հայաստանի տնտեսության առավել խոշոր դերակատարներից մեկը: Դրա վառ օրինակներն են 2 ցուցանիշ.

«Ամերիաբանկը» կորպորատիվ վարկային պորտֆելով զբաղեցնում է առաջատար դիրք շուկայում, ավելի քան 750 միլիարդ դրամ պորտֆելով: 2-րդ կարեւոր ցուցանիշը, որ տարիներ շարունակ բանկը առաջին տեղն է զբաղեցնում բանկային համակարգում վճարված հարկերի ծավալով»,- ArmLur.am հետ զրույցում ասել է «Ամերիաբանկի» կորպորատիվ վաճառքների եւ հարաբերությունների կառավարման բաժնի ղեկավար Էդուարդ Առաքելյանը:

Ֆորումի ընթացքում անցկացվեց նաեւ պանելային քննարկում, որի ընթացքում «Ամերիաբանկի» ներկայացուցիչը խոսել է ֆորումի տված հնարավորությունների, շուկայի միտումների եւ այլ հնարավորությունների մասին, ինչի վերաբերյալ կիսվել է նաեւ ArmLur.am-ի հետ:

«Այստեղ ներկա ենք, որպեսզի կիսվենք մեր փորձով, թե ինչպես են պրոեկտներն առհասարակ ֆինանսավորվում Հայաստանում, ինչպիսի մարտահրավերներ եւ հնարավորություններ կան»,- նշել է նա:

Հարկ է նշել, որ ֆորումին մասնակցեցին բիզնեսի, ճարտարապետության եւ խորհրդատվության ոլորտների առաջատար մասնագետներ շուրջ 20 երկրից՝ ԱՄՆ-ից, Մեծ Բրիտանիայից, Ֆրանսիայից, ԱՄԷ-ից, ՌԴ-ից, Չեխիայից, Վրաստանից, Կատարից, Ռումինիայից, Նիդեռլանդներից, Բելգիայից, Շվեյցարիայից, Օմանից եւ այլ երկրներից:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

ՆՈՐ ԿԱՆՈՆՆԵՐ ԿԳՈՐԾԵՆ

Հայաստանի եւ Վրաստանի կառավարությունների միջեւ միջազգային ավտոմոբիլային հաղորդակցության մասին համաձայնագրի շրջանակում սահմանվել է ոչ կանոնավոր ուղեւորափոխադրումների հսկիչ փաստաթղթի (ուղեւորների ցուցակի) փոխհամաձայնեցված ձեւաչափ եւ դրա լրացման պահանջներ:

Այս մասին հաղորդագրություն է տարածել ՀՀ զբոսաշրջության կոմիտեն:

Նշվում է, որ հսկիչ փաստաթուղթը պետք է լրացվի էլեկտրոնային եղանակով, իսկ դրա տպագրված տարբերակը վարորդի մոտ պարտադիր ներկայացվի վերահսկող մարմիններին: Նշված պահանջը ուժի մեջ կմտնի 2025 թվականի հուլիսի 1-ից:

ԿԱՐՈՂ ԵՆ ՏԱՐՀԱՆՎԵԼ

Իրանի Բուշեհրի ատոմակայանից որոշ ռուս աշխատակիցներ տարհանվել են, հայտնել է «Ռոսատոմ»-ի ղեկավար Ալեքսեյ Լիխաչովը Սանկտ Պետերբուրգի միջազգային տնտեսական համաժողովի շրջանակում:

Նա շնորհակալություն է հայտնել Հայաստանին եւ Ադրբեջանին ռուսաստանցիների տարհանման հարցում օգնության համար:

Լիխաչովի խոսքով՝ «Ռոսատոմը» բառացիորենմի քանի քայլ է հեռու արտակարգ դրությունհայտարարելուց, երբ բոլոր աշխատակիցներըլիովին կտարհանվեն:

Մինչ այդ Լիխաչովը հայտնել էր, որ Իրանի Բուշեհրի ատոմակայանին (ԱԷԿ) հարվածելով՝ իսրայելական բանակը կարող է հրահրելՉեռնոբիլի հետ համեմատելի աղետ:

Բուշեհրի ատոմակայանը Իրանի եւ ամբողջ Մերձավոր Արեւելքի առաջին ատոմակայանն է: Այն գտնվում է Բուշեհր քաղաքի մոտակայքում: Ատոմակայանի շինարարությունը սկսվել է 1975թ., սակայն արդյունաբերական շահագործման է հանձնվել միայն 2013թ.:

ԼՈՒՍԱՑՈՒՑԱՅԻՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Երեւանի քաղաքապետարանից հայտնում են, որ հունիսի 19-ից (չխմբ.) կկատարվեն նաեւ լուսացուցային օբյեկտների աշխատանքային ռեժիմների փոփոխություններ Արշակունյաց պողոտա - Ագաթանգեղոսի եւ Սուրբ Գրիգոր Լուսավորչի փողոցների, Սուրբ Գրիգոր Լուսավորիչ - Արգիշտիի փողոցների, Սուրբ Գրիգոր Լուսավորչի փողոց - Մաշտոցի պողոտա, Պարոնյան եւ Լեոյի փողոցների խաչմերուկներում:

Քաղաքապետարանից խնդրում են պահպանել երթեւեկության կանոնները եւ երթեւեկելու ընթացքում ուշադրություն դարձնել լուսացույցների աշխատանքային ազդանշաններին:

ԱԴՐԲԵՋԱՆԸ ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ ՋՈՐԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ Է ՄԱՄՆԱԿՑՈՒՄ

Ադրբեջանցի զինծառայողները կմասնակցեն «Անատոլիական արծիվ» միջազգային զորավարժություններին, որոնք կանցկացվեն թուրքական Քոնյա քաղաքում: Այս մասին հայտարարել է Թուրքիայի ազգային պաշտպանության նախարարության ներկայացուցիչ Ջեքի Աքթուրքը:

Բացի Ադրբեջանից եւ Թուրքիայից՝զորավարժություններին կմասնակցի ԱՄՆ-ի, Կատարի, Հունգարիայի, Եգիպտոսի, Սաուդյան Արաբիայի եւ Հորդանանի ցամաքային, ռազմածովային եւ ռազմաօդային ուժերի անձնակազմը:

Զորավարժություններին որպես դիտորդ երկրներ կներկայացվեն Բուլղարիան, Բրազիլիան, Մալայզիան, Մալին եւ Նիգերիան:

● «Ժողովուրդ» օրաթերթում եւ ArmLur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

Fastex

Գ.

ՆՈՐ ԹԱՐՄԱՑՈՒՄՆԵՐ՝ Fastex Meetup-Ի ԸՆԹԱՑՔՈՒՄ

Ս.թ. հունիսի 14-ին Հայաստանի բլոկչեյն էմբասիում տեղի է ունեցել Fastex-ի հերթական տեղեկատվական հանդիպումը՝ կրիպտո փոխանակման հարթակի թարմացումների եւ միջազգային ձեռքբերումների թեմայով:

Հանդիպման ընթացքում Fastex-ի մարքեթինգի բաժնի ղեկավար Նիկո Նիկոյանը խոսել է վերջին շրջանում Fastex-ի միջազգային հաջողությունների, վերջերս գործարկված նոր պրոդուկտների եւ ծառայությունների, ինչպես նաեւ ստացած հավաստագրերի վերաբերյալ: Հանդիպմանը ներկաները հնարավորություն են ստացել ուղղել իրենց հետաքրքրող հարցերը:

Խոսնակ Նիկո Նիկոյանն անդրադարձել է վերջին կարեւոր նորությանը՝ Fast Shift հավելվածում Fastex Exchange-ի ինտեգրացիային. «Այս տեխնիկական հնարավորությունը թույլ է տալիս կատարել դեպոզիտ դրամով անմիջապես Fast Shift հավելվածի միջոցով՝ կրիպտո ոլորտը միավորելով ամենօրյա ֆինանսների հետ: Fast Shift վճարային համակարգն ունի ավելի քան 300 ֆիզիկական տերմինալներ, որոնց օգնությամբ կարող եք կատարել ձեր ֆինանսական գործարքները»:

Fastex-ը շարունակելու է տեղեկատվական հանդիպումների շարքը՝ նպատակ ունենալով մեծացնել հետաքրքրությունը Web3 ոլորտի նկատմամբ եւ ձեւավորելով տեղեկացված եւ բանիմաց կրիպտո հասարակություն:

Հաջորդ հանդիպումները բաց չթողնելու համար անհրաժեշտ է հետեւել Fastex Armenia եւ ftNFT.am պաշտոնական էջերին:

Հիշեցնենք, որ Fastex-ն արագ զարգացող Web3 էկոհամակարգ է, որն իր օգտատերերին տալիս է հսկայական հնարավորություններ եւ հարմարավետ միջավայր՝ առաջարկելով Fastex Exchange կրիպտո փոխանակման հարթակը, Fastex Card-ը, YoWallet-ը եւ ftNFT-ն՝ իր հարթակներով եւ ֆիջիթալ սփեյսներով, ինչպես նաեւ YoHealth՝ առողջ ապրելակերպը խթանող հավելվածը:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գ.

«ՅՈՒՆԻԲԱՆԿ». ԲԱՐՁՐԱՑՐԵԼ Է ՎԱՐԿԱՆԻՇՆԵՐԸ

ՅՈՒՆԻԲԱՆԿ

Moody's-ը բարձրացրել է «Յունիբանկի» ազգային եւ արտարժույթով ավանդների երկարաժամկետ վարկանիշները B2-ից մինչեւ B1 եւ հեռանկարը սահմանել կայուն: Վարկունակության բազային գնահատականը եւ ճշգրտված BCA-ն b3-ից բարձրացվել են մինչեւ b2 մակարդակի, բանկի կոնտրագենտի ռիսկի ազգային եւ արտարժույթով երկարաժամկետ վարկանիշները (CRRs)՝ B2-ից մինչեւ B1, իսկ կոնտրագենտի ռիսկի (CR Assessment) երկարաժամկետ գնահատականը՝ B2 (cr)-ից բարձրացվել է մինչեւ B1(cr):

Վարկանիշների բարձրացումը պայմանավորված է վերջին երկու տարիների ընթացքում բանկի վարկային պորտֆելի որակի եւ շահութաբերության զգալի բարելավմամբ:

«ՎՏԲ-ՀԱՅԱՍՏԱՆ». ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐ

«ՎՏԲ-Հայաստան» բանկը միացել է «Երաժշտությունը հանուն ապագայի» հիմնադրամին՝ որպես գործընկեր: Բանկը կաջակցի հիմնադրամի հիմնական ծրագրերին, այդ թվում՝ մշակութային եւ կրթական նախագծերի զարգացում, համերգների կազմակերպում եւ երիտասարդ երաժիշտների համար կրթաթոշակների տրամադրում: Գործընկերությունը նպատակ ունի խթանել երաժշտական արվեստը եւ աջակցել տաղանդներին Հայաստանում:

««Երաժշտությունը հանուն ապագայի» հիմնադրամի հետ համագործակցությունը բիզնեսի ու մշակույթի միավորումն է՝ հանուն երիտասարդ տաղանդների աջակցության, որոնք կկարողանան պահպանել երաժշտական ավանդույթները եւ կկարողանան ներկայացնել Հայաստանը միջազգային բեմերում», - մեկնաբանել է «ՎՏԲ-Հայաստան» բանկի Գլխավոր տնօրեն - Տնօրինության նախագահ Արա Ավագյանը:

«Մեր հիմնադրամի համար սա պարզապես ֆինանսական աջակցություն չէ, սա ներդրում է տաղանդների մեջ: Մենք ստեղծում ենք հնարավորություններ, որպեսզի երիտասարդ երաժիշտները սովորեն լավագույն վարպետներից, աճեն մասնագիտորեն եւ վստահ քայլեն առաջ: Մենք շնորհակալ ենք «ՎՏԲ-Հայաստան» բանկին՝ մեր գլխավոր առաքելության իրականացման գործում մեզ աջակցելու համար՝ կառուցել երկրի երաժշտական ապագան՝ բացահայտելով եւ զարգացնելով նոր սերնդի ներուժը», - նշել է «Երաժշտությունը հանուն ապագայի» հիմնադրամի տնօրեն Աննա Տեր-Հովակիմյանը:

«Երաժշտությունը հանուն ապագայի» հիմնադրամը հիմնադրվել է 2019թ.-ին՝ Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի գեղարվեստական ղեկավար եւ գլխավոր դիրիժոր Սերգեյ Սմբատյանի նախաձեռնությամբ: Հիմնադրամի առաքելությունն է՝ աջակցել երիտասարդ հայ երաժիշտներին, զարգացնել նրանց ներուժը եւ խթանել երաժշտական մշակույթը ինչպես Հայաստանում, այնպես էլ նրա սահմաններից դուրս:

ՄԱՐԶԱԿԱՆ

ՖՈՒՏԲՈԼԻՍՏՆԵՐԸ ՈՐԱԿԱԶՐԿՎԵԼ ԵՆ

«Բոկա Խունիորսի» ֆուտբոլիստներ Նիկոլաս Ֆիգալը եւ Անդեր Էռերան որակազրկվել են չորս խաղով Աշխարհի ակումբային առաջնության խմբային փուլի առաջին տուրում «Բենֆիկայի» հետ խաղում (2:2) կարմիր քարտեր ստանալու համար, հաղորդում է Reuters-ը:

«Մենք արդեն կապվել ենք ՖԻՖԱ-ի հետ՝ որոշումը բողոքարկելու համար», - հայտարարել է արգենտինական ակումբի ներկայացուցիչը:

Անդեր Էռերան հեռացվել է խաղադաշտից 45-րդ րոպեին՝ մրցավարին վիրավորելու համար: Նշենք, որ նա փոխարինվել էր 20-րդ րոպեին՝ վնասվածքի պատճառով:

Պաշտպան Նիկոլաս Ֆիգալը կարմիր քարտ է ստացել 88-րդ րոպեին՝ կոպիտ խախտման համար:

Միեւնույն ժամանակ, «Բենֆիկայի» հարձակվող Անդրեա Բելոտին, ով 72-րդ րոպեին կարմիր քարտ էր ստացել կոպիտ խաղի համար, որակազրկվել է երկու խաղով:

Հանդիպումը սպասարկել է 41-ամյա մեքսիկացի մրցավար Սեսար Արտուրո Ռամոսը:

«Բոկա Խունիորսը» խմբային փուլի հաջորդ խաղերում կմրցի «Բավարիայի» հետ հունիսի 21-ին եւ «Օքլենդ Սիթիի» հետ՝ հունիսի 25-ին:

ՆՈՐ ՏՆՕՐԵՆ

Ֆուտբոլային ակումբ «Նոան» հայտնում է, որ թիմի սպորտային տնօրենի պաշտոնը վստահվել է Հայկ Հովակիմյանին:

Հովակիմյանը 2022-2024 թվականներին աշխատել է Հունգարիայի բարձրագույն լիգայում հանդես եկող «Դեբրեցեն» ակումբում՝ զբաղեցնելով նույն պաշտոնը:

Նշենք, որ նա արդեն ծանոթ է ակումբին. 2019-2022 թվականների ընթացքում Հովակիմյանը հանդիսացել է «Նոայի» սպորտային տնօրենը:

ՆՇԵԼ Է ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՆՈՐԱՄՈՒՏԸ

Անգլիացի պաշտպան Տրենտ Ալեքսանդեր-Առնոլդը նշեց իր պաշտոնական նորամուտը «Ռեալ Մադրիդի» կազմում՝ Աշխարհի ակումբային առաջնության բացման խաղում «Ալ Հիլալի» դեմ: Հունիսի 12-ին որպես «Ռեալի» խաղացող ներկայացված Տրենտը խաղադաշտում անցկացրեց 65 րոպե՝ ցուցադրելով իր հմտությունները: Խաղից հետո անգլիացին խոսեց խաղի, երկրպագուների աջակցության եւ իսպաներեն սովորելու իր փորձի մասին:

«Անհավատալի զգացողություն էր: «Ռեալում» խաղալը բոլորի երազանքն է, թեեւ մենք հիասթափված ենք, որ չկարողացանք հաղթել: «Ռեալի» մտածելակերպը միշտ հաղթանակի մասին է: Բայց երկրորդ խաղակեսում շատ դրական պահեր կային:

Առաջին խաղակեսում մեզ պակասում էր գնդակի վերահսկողությունը, սակայն ընդմիջումից հետո ավելի շատ էինք խաղում գնդակով: Դա ստիպեց հակառակորդին ավելի շատ պաշտպանվել եւ վազել գնդակի հետեւից»:

● Հ. Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի պետական թատրոնում հուլիսի 12-ին տեղի կունենա «Գիշատիչների խնջույքը» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝ 4000 դրամ:

ԵՂԵ՞Ք ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. Ի՞նչ պետք է անի անձը՝ կենսաթոշակի անցնելու համար:

Հրանուշ Սարուխանյան (42 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Եթե անձը ձեռք է բերել կենսաթոշակի անցնելու իրավունք, ապա առաջին հերթին պետք է նախապատրաստի կենսաթոշակ նշանակելու համար անհրաժեշտ փաստաթղթերը եւ դիմի աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարության միասնական սոցիալական ծառայության ցանկացած տարածքային կենտրոն: Այսպես. տարիքային կենսաթոշակ նշանակելու համար նա պետք է ներկայացնի՝

1) դիմումը,
2) անձը հաստատող փաստաթուղթը,
3) հանրային ծառայությունների համարանիշը,
4) աշխատանքային ստաժը հաստատող փաստաթուղթը (աշխատանքային գրքույկը, անհրաժեշտության դեպքում՝ ստաժը հաստատող այլ փաստաթղթեր կամ արխիվային տեղեկանքներ),
5) սոցիալական վճար կատարած լինելու մասին ծառայության տված տեղեկանքը (կամ այդ փաստը հավաստող վճարման հանձնարարագրեր, անդորագրեր) կամ գործատուի տված տեղեկանքն աշխատավարձի չափի մասին՝ ըստ տարիների եւ ամիսների,
6) լուսանկար (4 x 6 սմ չափի):

ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Կենսաթոշակ նշանակող ստորաբաժանումում դիմումատուն լրացնում է աշխատակցի տրամադրած դիմումի ձեւը, որից հետո նրան է վերադարձվում դիմումի ծանուցումը, որտեղ նշվում է դիմումի գրանցման համարը, ընդունման ամսաթիվը, ընդունող աշխատակցի ազգանունը, անհրաժեշտության դեպքում՝ լրացուցիչ փաստաթղթեր ներկայացնելու ժամկետը:

Էջը՝ ԱԼՎԱՐԴ ԿՈՇԿԱԿԱՐՅԱՆԻ

ՏՆՏԵՍԱԿԱՆ

ՀԱՐՑ. Հեսարրիր է իմանալ՝ ի՞նչ է գնաճը:

Դիաննա Մելքոնյան

ՊԱՏԱՍԽԱՆ. Հայտնում ենք, որ Հայաստանի Հանրապետության Վիճակագրական կոմիտեն հետեւում է ժամանակային շարքերին, որոնք ներկայացնում են գների շարժը, այսինքն՝ գների ինդեքսները Հայաստանի տնտեսության ընտրված ոլորտների համար: Սպառողական շուկայի համար դա սպառողական գների ինդեքսն է, ընդհանուր տնտեսության համար՝ ՀՆԱ դեֆլյատորը, որը ներկայացնում է տնտեսությունում արտադրված բոլոր ապրանքների եւ ծառայությունների միջին աճը. կա արտահանման գների ինդեքս արտաքին առեւտրի համար եւ ներմուծման գների ինդեքս ներքին առեւտրի համար եւ այլն: Գնաճը տնտեսության որեւէ հատվածում որեւէ ինդեքսի աճի տեմպն է եւ հաճախ ունի հաշվարկման հատուկ մեթոդաբանություն:

Թե՛ աշխարհի բոլոր երկրներում, թե՛ Հայաստանում գնաճ տերմինն օգտագործվում է հիմնականում, երբ խոսքը սպառողական գների ինդեքսի աճի տեմպի մասին է:

ՀՀ կենտրոնական բանկ

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Թեեւ այն լիովին չի արտացոլում տնտեսությունը, այնուամենայնիվ, այն ամենաշատն է ընկալվում հասարակության կողմից:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

Թել Ավիվում բարձրահարկ շենքին փակցվել է պաստառ՝ Թրամփի պատկերով եւ նշված գրությամբ. «Պարոն նախագահ, ավարտին հասցրեք գործը»:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ. 52-53-01

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	+10 + 12 +20 + 24
Կոտայքի լեռներ	+11 + 13 +19 + 22
Կոտայքի նախալեռներ	+13 + 15 +26 + 28
Գեղարքունիք	+12+ 16 +19 + 22
Լոռի	+14 + 19 +24 + 26
Տավուշ	+12+ 17 + 26+ 28
Արագածոտնի լեռներ	+10 + 13 +19 + 22
Արագածոտնի նախալեռներ	+14 + 18 + 26+ 29

Արարատ	+14 + 19 + 30+ 32
Արմավիր	+14 + 19 + 20+ 22
Վայոց ձորի լեռներ	+11 + 13 + 20+ 22
Վայոց ձորի նախալեռներ	+13 + 15 +29 + 32
Սյունիքի հովիտներ	+12+ 16 + 32+ 35
Սյունիքի նախալեռներ	+10+ 13 +25 + 27
ԼՂՀ	+10+ 12 +23 + 26
Երեւան	+19+ 21 +25 + 27

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը:
Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **19.6.2025**
Տպաքանակ՝ 3968
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*